ԱՆՑՅԱԼԻ ՈՒ ՆԵՐԿԱՅԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԹՈՒՐՔ ԳՐՈՂ ԷԼԻՖ ՇԱՖԱԿԻ «ՍՏԱՄԲՈՒԼԻ ԲԻՃԸ» ՎԵՊԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

(«Թուրքերի աչքերում անցյալն այլ աշխարհ է» է. Շաֆակ)*

Լուսինե Ղարախանյան

Բանալի բառեր՝ անցյալի ըմբռնում, կառուցողական ներկա, սահման, ապաշխարություն, սիմվոլացում, ազգային հիշողություն, կարծրատիպեր, ֆունդամենտալ հայացքներ, սերունդների փոխհարաբերություն:

Անցյալի ու ներկայի, «օտարի» ու «յուրայինի» փոխհարաբերության հարցի դիտարկումը արդիական է բոլոր ժամանակների, հատկապես մեր օրերի համար: «Ստամբուլի բիճը» վեպի հրատարակումից հետո Էլիֆ Շաֆակին մեղադրանք է առաջադրվել Թուրքիայի քրեական օրենսգրքի 301 հոդվածով, որը վերաբերում է ազգային ինքնությունը վիրավորելուն: «Ստամբուլի բիճը» թուրք և ամերիկահայ ընտանիքների, մասնավորապես նրանց իրար հետ կապող գաղտնիքների մասին է, որոնք առաջացել են պատմական դաժանությունների հետևանքով:

Հեղինակը նկարագրում է թուրքական ընտանիք, որտեղ միայն կանայք են ապրում, մեկը ֆունդամենտալ մուսուլման է, մյուսը՝ ժամանակակից հայացքների տեր: Ստեղծագործության մեջ նաև հայկական ընտանիքի պատմություն է՝ անցյալի ծանր բեռով և վիճահարույց ներկայով: Ինքը՝ Էլիֆ Շաֆակը, կախված չէ ինքնության պատկանելության զգացողությունից: Նրա ինքնությունն, ըստ էության, ժամանակի ընթացքում փոփոխության է ենթարկվում: Եվ մենք գործ ենք ունենում ոչ թե ինքնությունից հրաժարվելու, այլ անձի լիակատար ինքնահաղթահարման և ապաշխարման գործընթացի հետ: Սա հեղինակի ամբողջականության և ներքին համերաշխության գործընթացն է, որտեղ ըստ էության խաղաղ ներդաշնակության մեջ են խմբային անգիտակցականն ու էգոն, ընդ որում, անցյալի հետ առերեսումից չեն տուժում նրա էգոյի իդեալները: «Անհատները խմբերի նման կարող են ունենալ տարբեր ինքնություններ՝ ժառանգական, տնտեսական, սոցիալական, մշակութային, էթնիկական և այլն: Ինքնության տեսակների կարևորությունը խմբի կամ անհատի համար ժամանակի ընթացքում կարող է փոխվել»,- գրում է Ս. Հանթինգթոնը[1]: Իսկ ահա Ֆրեդերիկ Բարտլետը (Frederick Charles Bartlett), ով կարևորում է անցյալի «սխեմատիկ» գերակա ազդեցությունը անհատի վրա, միաժամանակ նշում է, որ հիշելը մարդուն օգնում է տիրապետել և վայելել փոփոխություններով լի աշխարհը[2]: Այստեղ արդեն նայած, թե ով ինչ ձևով է դա անում: Իսկ ահա հիշողությունն ուսումնասիրողներից մեկ այլ հետազոտողի՝ Մ. Հալբվախսի դիտարկմամբ հիշողությունը մի մատերիա է, որը ցույց է տալիս, թե ինչպես են հիշողությունները համատեղ աշխատում հասարակության մեջ, ինչպես են նրանց գործողությունները կառուցվում՝ ըստ սոցիալական պատվերի[3]:

Տիրապետում եմ իրավիճակին[4]. սա հիշողությունը ոչ թե բեռ կամ տառապանք ընկալելն է, այլ հիշողությամբ իրավիճակին տիրապետելը:

---

* Հոդվածն ընդունվել է 24.03.20:
Հոդվածը տպագրության է երաշխավորել է ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը: 31.03.20:

XX դարասկզբի մեկ այլ հեղինակի՝ Գեորգ Սիմմելի ***(Georg Simmel)*** *տեսական բնույթի որոշ դիտարկումներ հիմք դրեցին աշխատությունների շարքի՝ նվիրված հիշողության ու կորստի վկայությունների կապերին[5] :*

Էլիֆ Շաֆակը «Ստամբուլի բիձը» ստեղծագործության մեջ ուղիղ տեքստով խոսում է հայոց ցեղասպանության մասին: «… երբ հայերը դեռ Օսմանյան կայսրության մի մասն էին, Օսմանյան կառավարության կողմից վտարվածների մեջ գրողներ, բանաստեղծներ, արվեստագետներ, մտավորականներ են եղել: Սկզբում ազատվել են «ուղեղներից», դրանից հետո աքսորել են մնացածին՝ հասարակ ժողովրդին: Սփյուռքի շատ հայ ընտանիքների պես Զաքմաքչյաններն էլ և՛ հպարտանում, և՛ անհանգստանում են, երբ երեխաներից մեկը գրել-կարդալուն չափից դուրս շատ ուշադրություն է դարձնում, և երբ գնահատականը միջինից չափազանց բարձր է լինում»,-գրում է Շաֆակը: Մեկ այլ տեղում գրում է.«Անցյալում կորուստներ ունեցածների համար երևակայությունը թունավոր հեղուկ է, աննկատ տարածվում է արյան մեջ, խախտում կառուցվածքը, խոչընդոտում ապագայի ու ներկա կյանքի վրա կենտրոնանալուն:…Սփյուռքում հայ լինել նշանակում է ողջ մնացածների թոռ լինել: Եթե որպես ողջերի երեխա ցանկանում ես կարդալ, մտածել, գրել և երազել, դա պետք է անես անձայն» [6]: Շաֆակը անդրադառնում է նաև որբանոցներին ու որբացած հայ մանուկներին.«Տասներկու տարեկանից փոքր բոլոր հայ որբերին երկրի որբանոցներ հանձնելու հրաման էին ստացել, կամ էլ հույս ունեին այդպիսով փող պոկել: Իհարկե՝ Շուշանին էլ: «Բոլորը նրան Շերմին էին ասում: Մեկ էլ՝ ազգանուն տվեցին՝ 626»[7]: Բավականին հետաքրքիր գեղարվեստական ու նաև հոգեբանական ու հոգեվերլուծական հնարքներով Էլիֆ Շաֆակը ներկայացնում է լռության խորհուրդը, որն ավելի շատ խեղդող ու ճնշող ազդեցություն է ունենում եղեռնի երկրորդ և հաջորդ սերունդների վրա: Այսպես, անձայն են մնում վեպի գլխավոր հերոսներից մեկի՝ Արմանուշի բոլոր երազները, Արմանուշի վարքագիծը դառնում է ստերեոտիպացված, վարքն ու մտածողությունը՝ մշտապես լարված: Նա եղեռնից տուժածներից և սփյուռքում հաստատված հայ ընտանիքի թոռ է, որի մայրը Միջին Արևմուտքում ծնված, բողոքական ամերիկուհի է և հայկական ընտանիքից վրեժ է լուծում թուրք ամուսնու՝ Մուստաֆայի միջոցով: Ներքին կոնֆլիկտների ու երկվության մեջ է հայկական ընտանիքում ծնված Արմանուշը, ում մայրը՝ Ռոզը, բաժանվելուց հետո ամուսնացել էր թուրք Մուստաֆայի հետ: Այս փաստը նեղացնում ու բարդութավորում էր Արմանուշին: Ոչ մեկի մոտ չէր խոսում թուրք խորթ հորից: Արմանուշի համար շատ դժվար էր ապրել թուրք հոր և հայերին ատող մոր ընտանիքում, նա տատանվում էր «հպարտ, բայց կորուստ ունեցած հայ ընտանիքի և հիստերիայի աստիճանի հակահայ մոր միջև»: Արմանուշը նախընտրում էր չխոսել ընտանիքի մասին: «Իմանալով, որ գաղտնիքները գրիպից արագ են տարածվում, գաղտնիքներն էլ, լռությունն էլ պահպանում էր»[8]: «Եթե մի հայի մոտ «Մուստաֆա» անուն ասեր, նա միանգամից կփշաքաղվեր»[9]: Երկու ընտանիքների արանքում հայտնված ու արհեստականորեն երկատված Արմանուշը կայքում ընտրել էր իրեն «Մադամ վտարված հոգի» կեղծանունը՝ ի պատիվ իր շատ սիրելի Զապել Եսայանի՝ 1915 թվականին Օսմանյան կառավարության աքսորած Սաքընջայի հայ մտավորականների ցուցակում միակ կին գրողի:

Վեպում բազմաթիվ են հայերի նկատմամբ արտահայտված դրական հետերոստերեոտիպերը, առկա են նաև բացասական ավտոստերեոտիպեր թուրքերի նկատմամբ: Բավականին շատ են հոգեբանական նույնացումները հայկական էթնոսի հետ, և հակառակը՝ իդենտիֆիկացիայի նվազ դրսևորումներ սեփական էթնոսի հետ: Բերենք մի քանի օրինակներ. «-Ասա՛ ինձ, քանի՞ թուրք է հայերեն սովորել: Հը՞, կա՞ն այդպիսի թուրքեր: Ոչ» [10]: Անցյալը, ըստ էության, ներկա չէ: Սակայն «Ստամբուլի բիձը» վեպում անցյալի ու ներկայի սահմանները միավորվում են: Վեպի տեքստում բացակայում է քաղաքական ենթատեքստը: «Կյանքը ծայրեծայր գոյատևման պայքար է, սա-

կայն եթե հայ ես, երեք անգամ ավելի դժվար է լինում, երեք անգամ ավելի բարդ: Անցյալում կորուստներ ունեցածների համար երևակայությունը թունավոր հեղուկ է, աննկատ տարածվում է արյան մեջ, խախտում կառուցվածքը, խոչընդոտում ապագայի և ներկա կյանքի վրա կենտրոնանալուն:

«Միայն հայը կարող է հասկանալ, թե ինչ է նշանակում այսքան պակասելը, թվով այսքան փոքր մնալը: Էտած ծառի պես փոքրացանք»[11],- գրում է Էլիֆ Շաֆակը՝ նաև այսպես զգալով հայերի կորստի բովանդակ մեծությունը:

Բավականին շատ են վեպում արտահայտված բացասական ավտոստերեոտիպերը, որոնք վերաբերում են թուրքերին: Ստերեոտիպերն արտահայտված են հիմնականում Քազանջընների թուրքական ընտանիքի կենցաղի ու բարքերի միջոցով: «Քազանջընների ընտանիքը ուրիշների պատմությունները երբևէ չմոռանալու և սեփական պատմությունները վայրկենական ջնջելու հակում ունեցող ընտանիք էր»[12]: Ըստ էության հեղինակն այս մտքի տողատակում արտահայտում է թուրքական էթնոսի հոգեկերտվածքի ընդհանրական որակներից մեկը՝ կանխամտածված ամնեզիան կամ ուրացությունը: Մեկ այլ տեղում հեղինակը թուրքական դեմոկրատիան համեմատում է ալկոհոլային խմիչքի հետ. «Եթե այս երկրում գոնե մի քիչ դեմոկրատիա կա, այս ծեռքիս ալկոհոլի շշին ենք պարտական, դրսից եկող շտապօգնության մեքենայի ձայնը լռեցնելու համար՝ ձայնը բարձրացրեց:- Ո՛չ սոցիալական ռեֆորմները, ո՛չ քաղաքական շարժումները, ո՛չ անգամ ազատագրական պատերազմը: Թուրքիային մյուս բոլոր մուսուլման երկրներից առանձնացնողը սա է: Այս գարեջուրը, այս գարեջուրը…, բարձրացրեց գավաթը, ասես հիմա մյուս գավաթներին էր զարկելու ազատության և զարգացած քաղաքացիական հասարակության խորհրդանիշը» [13]:

Վեպի հետաքրքիր կերպարներից է թուրք Քազանջընների ընտանիքի դուստրերից մեկի աղջիկը՝ Ասյան: Խոսելով թուրքերի մասին՝ Ասյա Քազանջընն (թուրքական ընտանիքում ծնված բիձը) ասաց.«Ոչ թուրք տղամարդիկ էլ բոլորը կամ բռնաբարող են, կամ բռնապետ, կամ էլ պայմաններից է կախված: Ոչ թուրք բոլոր կանայք առաջին պատահածի հետ քնում են»[14]: Ստամբուլի բիձը լինելու անեծքով ներկայացվում են անմարդկային բարքերը, որոնք կենսական են այդ ընտանիքում: Թերևս ամենահրեշավոր ու դաժան իրականությունը. Ասյան ծնվել է ինցեստի արդյունքում: Նրա գենետիկ հայրը քեռին է՝ Մուստաֆան: Ասյայի տառապանքները ծգվում են տարբեր դրվագներում ու տեսարաններում: «Հասարակության և Իմ մեջ խոր անդունդ կա. եթե նրա վրա դողացող կախովի կամուրջ է, երկու կեսերն իրար կապելու հուսահատ փորձերի փոխարեն բաց թող կամուրջը: Կարող ես հասարակությանը հեռվից ցտեսություն ասել և ընդմիշտ մնալ Քո տարածքում»[15]: Նա կենտրոնացած է բիձ լինելու իր ցավի վրա.

Ես այսօր ինձ ցավեցնում եմ,
Որ տեսնեմ՝ արդյոք դեռ զգում եմ,
Ես կենտրոնանում եմ ցավի վրա՝
Միակ բանը, որ իրական է:

Ասյան շարունակում է ընտրել Ջոնի Քեշի երգերի այն պատառիկները, որոնք նրան հոգեհարազատ են, սրտի խորքից բխած: Նա նախանձում է իր Մեծ տատիկին ու երազում ունենալ այգհեյմերի նրա հիվանդությունը, որը աստիճանաբար հալեցնում է նրա հիշողությունը: Ասյան քաղցր ու աննման է համարում այդ հիվանդությունը: «Այգհեյմերն այնքան էլ տհաճ չէ, ինչքան կարծում ենք: Անցյալը շղթա է, որից պետք է ազատվենք»[16]:

Ստեղծագործության առանցքային խնդիրը ոչ միայն հիշողության ու խոստովանության, այլ ինքնության պահպանումն է: Մարդիկ երկու մասի են բաժանվում՝ օրորոցից մինչև գերեզման միևնույն անունը կրող, այսինքն՝ իրենց ներսի ճշմարտությանը համապատասխան, իրենց ինքնությանը հավատարիմ մնացողներ, և իրենց անունները չպահողներ, այսինքն՝ տառերը փոփոխելով, տատանվող հոգիներով՝ նոր անուններ և

կեղծանուններ վերցնողներ, անունների բազմազանության մեջ ընտրություն չկատարողներ:

Թուրք հեղինակը շատ լավ պատկերացում ունի հայկական մշակույթի և հայերի մասին ընդհանրապես: Նա հետաքրքիր ու միանգամայն դրական տեսանկյունով է անդրադառնում Չապել Եսայանին, նշում նրա գրած «Ավերակներու մեջ» գրքի մասին: Նա խոսում է նաև ենիչերիների մասին. «Նրանք, ովքեր հավատում են Օսմանյան կառավարության արդարությանը, չգիտեն ենիչերիների պարադոքսը: Ենիչերիները քրիստոնյա երեխաներ էին, ովքեր սեփական ժողովրդին արհամարհելու և անցյալը մոռանալու գնով հավանական հասարակական աստիճանների գագաթին հասնելու նպատակով կրոնափոխվելու էին Օսմանյան պետության կողմից»[17]: Գրքում հետաքրքիր ձևով է ներկայացվում նաև ենիչերիների պարադոքսը, որը բնութագրվում է անցյալի մնացորդների և փայլուն ապագայի խոստման խճանկարով, որում կան հիշողություն, տխրություն և անարդարություն:

Շաֆակը տեքստում անդրադառնում է նաև հայերի մասին գոյություն ունեցող բացասական ստերեոտիպերի. «Ասյան եկավ այն եզրակացության, որ հայերը հաճախ են սիրում խղճալ իրենք իրենց»[18]: Իրականում սա հայերի բացասական այն որակն է, որն այլևս ծածկագրված է մեր հոգեկերտվածքում:

Վեպում անցյալն ու ներկան բախվում են Արմանուշի՝ Ստամբուլ կատարած այցի ժամանակ: Քազանջընների ընտանիքում նա զգաց իր օտարությունը, երբ խոսք եղավ «System of a Down» ռոք խմբի՝ թուրքերի նկատմամբ ունեցած ատելության մասին:Արմանուշը խորթ հոր թուրք ընտանիքին ներկայացավ որպես Արմանուշ Չաքմաքչյան՝ նշելով Ստամբուլում նախկինում բնակվող տատիկի ու պապիկի հայտնի ընտանիքի մասին: Նա պատմեց ընթերցասեր պապիկի ու իր նմանության մասին՝ նշելով, որ նա, ցավոք, մահվան դատապարտված այն մտավորականների ցուցակում էր, որոնց մեջ էին քաղաքական պարագլուխներ, բանաստեղծներ, գրողներ, լրագրողներ, հոգևորականներ... ընդհանուրը՝ 234 մարդ: «1915 թվականի ապրիլի 24-ի երեկոյան Ստամբուլի հայերին ձերբակալելով՝ հոգ են տարել նրանց անվտանգության մասին: Բոլորն այդ օրը տոնական են հագնվել, ասես ինչ-որ արարողության էին գնում....»[19]: Արմանուշը Քազանջընների ընտանիքին պատմում է տատիկի ընտանիքի ողջ պատմությունը, որ մնացել էր առանց հոր, և այրիացած տատիկի ու հազարավոր հայերի տառապալից պատմությունը: «Ինքը որպես հայ աղջիկ հավատում էր, որ իր սերնդից առաջ ապրած սերունդների՝ պապերի հոգիներն իր մեջ են ապրում: Մինչդեռ շարքային թուրքի և իր ծագման միջև տևականության նման զգացում չկար» [20]: «Հայերն ու թուրքերը հավանաբար ապրում են տարբեր ժամանակային գոտիներում: Հայերի համար ժամանակը մի շրջան է. անցյալի՝ ներկայում նորից ծնվելու, ներկայի՝ ապագա ծնելու մի շրջան: Հավանաբար, թուրքերի համար ժամանակը շատ տեղերում բաժանված, կտրտված գծի է նման. անցյալը մի կոնկրետ կետում ավարտվում է, այժմ զրոյից է սկսվել: Թուրքերի անցյալի և ներկայի միջև մասնատվածությունից բացի այլ բան չկա»[21]:

Ստամբուլի սրճարաններից մեկում նստած երկու սերունդների ներկայացուցիչները՝ Ասյան և Արմանուշը, խոսում են հայոց ցեղասպանության մասին՝ Սուլթան Համիդի պանիսլամիստական, պանթուրքիստական լծից, 1909 թվականի Ադանայի կոտորածներից ու 1915 թվականի տեղահանությունից... «Սրանք մի բան հիշեցրի՞ն: Երբեք չե՞ս լսել «Հայոց ցեղասպանություն» ասվածը:

Իսկ Ասյայի կարծիքով տևականության զգացումը հիանալի առանձնահատկություն է, և այն մարդուն հանդուրժող է դարձնում.«Տեսնում եմ, թե որքան կարևոր և որքան ողբերգական է պատմությունը քո ընտանիքի համար, և հարգում եմ հուշերը կենդանի պահելու ձեր ցանկությունը, որպեսզի ձեր պապերի ողբերգությունը չմոռացվի: Բայց մեր ճանապարհները հենց այստեղ բաժանվում են: Քոնը հուշերի ճամփորդութ-

յունն է, հիշողության բացարձակացում: Իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա ես կնախընտրեի Մեծ տատիկիս նման լինել. երանի ոչինչ չհիշեի»[22]:

Գուշակությամբ զբաղվող Բանու մորաքրոջ վրա ևս ազդել էր Արմանուշի պատմությունը: Այս պատմությանը ավելի մոտիկից ծանոթանալու համար նա դիմում է չար հոգիների խմբին պատկանող Աղուլու Բեյին, ով պատմեց 1915 թվականի տոսկալի դեպքերին «իր մասնակցության» մասին: Չար հոգիներն ամեն բան գիտեն: Աղուլու բեյի բերանով Շաֆակը ներկայացնում է Արմանուշի ընտանքի ողջ պատմությունը և «առաջարկում պատմել աղջկան»: Ավելին՝ Աղուլու բեյի բերանով Շաֆակը ներկայացնում է վեպի թերևս ամենասահմռկեցուցիչ սքողված գաղտնիքը. բիձի ծնունդը՝ սրբապղծության և արյունապղծության դրսևորմամբ:

Վեպի հետաքրքրաշարժ լուծումներից է նաև «Նռան հատիկներ» տասներկուերորդ հատվածը, որտեղ ներկայացվում է Հովհաննես Իստամբուլյանի «Աղավնու կորած ձագ և խաղաղ Գարնան Երկիր» մանկական գիրքը, որը ընտանիքի և ընկերների հետ տաք երկնքի վրայով թռչելիս կապույտ երկնքում ճանապարհը կորցրած փոքրիկ աղավնու մասին է: Խոսելը մեղք է դառնում նաև հեքիաթի աղավնու համար: Պատմությունն իրականում տխուր է, բայց ոչ անհույս:

«Ստամբուլի բիձը» թվում է թուրքերի մասին գրելու էլիֆ Շաֆակի մեկնակետն է: Նրան հաջողվել է հասնել ոչ միայն թրքությունը ցույց տալուն, այլև դրա ժառանգման ընթացքն ու այն փոխելու մղումների, հայերի ու թուրքերի հնարավոր երկխոսության, անցյալի ու ներկայի դիտարկմանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Хантингтон С.**, Кто мы?: Вызовы американской национальной идентичности, АСТ, Москва, 2004, стр. 53
2. **Remembering:** A Study in Experimental and Social Psychology, Citation: Bartlett, F.C. (1932). Remembering: A Study in Experimental and Social Psychology. Cambridge University Press.Chapter 2, p. 4.
3. Մարության Հ.Տ., Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ. – Երևան, «Նորավանք», 2006, էջ 18:
4. Frederic Bartlett, For the Routledge Handbook of Philosophy of Memory, p. https://www.academia.edu/30679099/Frederic_Bartlett.
5. Մարության Հ., Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ. – Երրևան:«Նորավանք», ԳԿՀ, 2006. էջ 15:
6. Շաֆակ էլիֆ, Ստամբուլի բիձը: Վեպ, Երևան, Անտարես, 2012, էջ 116:
7. Նույն տեղը՝ էջ 267:
8. Նույն տեղը՝ էջ 111-112:
9. Նույն տեղը՝ էջ 112:
10. Շաֆակ էլիֆ, Ստամբուլի բիձը: Վեպ, Երևան, Անտարես, 2012, էջ 112:
11. Նույն տեղը՝ էջ 71,72:
12. Նույն տեղը՝ էջ 73:
13. Նույն տեղը՝ էջ 103-104:
14. Նույն տեղը՝ էջ 233-234:
15. նույն տեղը՝ էջ 162:
16. Նույն տեղը՝ էջ 167:
17. Նույն տեղը՝ էջ 132:
18. Նույն տեղը՝ էջ 197
19. Նույն տեղը՝ էջ 181:

20. Նույն տեղը՝ էջ 184:
21. Նույն տեղը՝ էջ 184:
22. Նույն տեղը՝ էջ 199:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Անցյալի ու ներկայի սերունդների փոխհարաբերության դիտարկումը թուրք գրող էլիֆ Շաֆակի «Ստամբուլի բիճը» վեպի համատեքստում

Լուսինե Ղարախանյան

Հոդվածում փորձ է արվել ներկայացնելու թուրք գրող էլիֆ Շաֆակի «Ստամբուլի բիճը» վեպի հոգեբանական համատեքստը: Դիտարկվել է անցյալի ու ներկայի սերունդների փոխհարաբերությունների հարցը գեղարվեստական երկում արտացոլված երկու ընտանիքների օրինակով: Վեպում էլիֆ Շաֆակը կերտում է սոցիալական իրականության իր մոդելը, որի վրա անցյալը ոչ մի ներգործություն չունի և, որը հեռու է սուբյեկտիվության կաղապարող սահմաններից: Վեպի տեքստում ու ենթատեքստում ներկայացված տեղեկությունները հայերի ու հայոց ցեղասպանության մասին հոգեբանական կառուցողական գործընթաց է, որն ընդգծում է հեղինակի՝ անցյալի հետ ունեցած անձնական հոգեբանական կապի ու դրանից ձերբազատված վիճակի պատկերը: Հոդվածը նաև ապաշխարած թուրքերին գնահատելու փորձ է:

РЕЗЮМЕ

Наблюдение за взаимоотношениями поколений прошлого и настоящего в контексте романа турецкого писателя Элифа Шафака " Стамбульский бич

Лусине Караханян

Ключевые слова: понимание прошлого, конструктивное настоящее, граница, раскаяние, символизация, национальная память, стереотипы, фундаментальные взгляды, взаимоотношения поколений

В статье предпринята попытка представить психологический контекст романа турецкого писателя Элифа Шафака "Бастард Стамбула". Вопрос об отношениях между прошлым и настоящим поколениями был рассмотрен на примере двух семей, отраженных в художественной литературе. В романе Элиф Шафак строит свою модель социальной реальности, на которую прошлое не оказывает никакого влияния и которая далека от всепроникающих границ субъективности. Информация, представленная в тексте и контексте романа, представляет собой конструктивный психологический процесс об армянах и геноциде армян, подчеркивающий личную психологическую связь автора с прошлым и состоянием освобождения от него. Эта статья также является попыткой оценить раскаявшихся турок.

SUMMARY

Observation of the Relationship Between Past and Present Generations in the Context of Turkish Writer Eliz Şafak's Novel "The Bastard Of Istanbul"

Lusine Gharakhanyan

Keywords: understanding of the past, constructive present, boundary, repentance, symbolization, national memory, stereotypes, fundamental views, intergenerational relationship.

The article attempts to present the psychological context of Turkish writer Elif Şafak's novel "The Bastard of Istanbul". The question of the relationship between past and present generations has been considered by the example of two families reflected in the fiction. In the novel, Elif Şafak builds on his model of social reality, on which the past has no influence and which is far from the pervasive limits of subjectivity. The information presented in the text and context of the novel is a constructive psychological process about Armenians and the Armenian Genocide, which emphasizes the author's personal psychological connection to the past and the state of liberation from it. The article is also an attempt to value repentant Turks.